

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ



8 հուլիսի, 2020 N 39

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 32  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրի 2-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերով և հաշվի առնելով, որ վերացել է Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը՝ **որոշում եմ**.

1. Արցախի Հանրապետության պարետի 2020 թվականի հունիսի 18-ի «Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Չափար և Գետավան համայնքներում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների մասին» N 32 որոշումն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

  **Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**